ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 մարտի շաբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

26
(3057)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՈ՞Ւ ԱՎԻՆՅԱՆԻ ԸՆԿԵՐ ԵՐԵՄՅԱՆԻ ԹԱՆԿԱՐԺԵՔ «ԼԻՎԻՆԳՍԹՈՆԸ» ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Նիկոլ Փաշինյանի #հատիկառհատիկ օպերացիայով իշխանությունները հերթական անգամ հանրության աչքերին թոզ փչելու գործընթաց են սկսել: Իրականում նա իր «սրտի» նորահայտ օլիգարխներից ոչինչ չի վերցնում ու հետ տալիս պետությանը:

«Ժողովուրդ» օրաթերթը արձանագրեց, որ օրերս Նիկոլ Փաշինյանը գրել էր. «#հատիկառհատիկ Դատարանի վճռով Երեւան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղուն հարող տարածքում գտնվող՝ 12 հազար 400 քմ մակերեսով հողամասի նկատմամբ, որպես ապօրինի ձեռքբերված գույք, վերականգնվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը: Շուկայականին մոտարկված արժեքը՝ 730 միլիոն դրամ»:

Թե Ծիծեռնակաբերդի խճուղուն հարող որ տարածքի մասին է խոսքը, անհայտ է, սակայն այս ամենի կուլմինացիան այլ է: 2019 թվականին, երբ խոսվում էր հետհեղափոխական Հայաստանի փայլուն ապագայի մասին, Նիկոլ Փաշինյանը վանկարկում էր, որ հատիկ առ հատիկ ամեն բան հետ են բերելու, «ոչ մի մուկ, ոչ մի ձուկ չի պլստալու»:

Սակայն տարիներ անց ստացվեց այնպես, որ իշխանության «սրտի» որոշ օլիգարխներ հեշտ ու հանգիստ «պլստացին»: Այդ օլիգարխներից մեկն էլ Դավիթ Երեմյանն է, ով, 2019 թվականին հանրության ճնշումներին դեմ գնալով, իշխանության հովանավորչությունը վայելելով, սեփականաշնորհեց պետական գույք հանդիսացող Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի շենքի մի հատվածը՝ բացելով այնտեղ գերթանկարժեք «Լիվինգսթոն» ռեստորանը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Տիգրան Ավինյանի ընկեր դարձած Դավիթ Երեմյանն արտոնյալ գործողություններով է աչքի ընկնում: Իշխանությունը սկսել է պետական գնումներ կնքել հենց «Երեմյան Փրոջեքթս»-ի հետ, պետական պատվիրակությունների ճաշերը, ընթրիքները կազմակերպվում են «Երեմյան Փրոջեքթս»-ին պատկանող ռեստորաններում: Ինչ վերաբերում է խախտումներով կառուցված «Լիվինգսթոն» ռեստորանին, ապա Աննա Հակոբյանը բիզնեսմենների հետ ճաշկերույթ ունեցավ հենց այդտեղ, ՔՊ-ն իր դրամահավաքներից մեկը անցկացրեց «Լիվինգսթոն»-ում:

Ստացվում է, որ հատիկ առ հատիկ վերցված ապօրինի գույքն արդյունքում սեփականաշնորհվում է իշխանամերձ շրջանակի կողմից եւ մատուցվում իբրեւ «հաղթանակ նախկիններ դեմ»:



Առեղծվածային պայմաններում Հայաստանում հայտնված 1 տոննա կոկաինի գործով քրեական հետապնդման ժամկետը, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն, հերթական անգամ երկարաձգվել է: Կամ նախաքննական մարմինը գործով մեղադրյալների նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցնի, կամ այն դատարան ուղարկի: Սակայն որոշել են քրեական հետապնդման ժամկետը եւս 1 ամսով երկարաձգել, ու սա առաջին երկարաձգումը չէ: Նշենք, որ երկարաձգման պատճառը, ըստ էության, այն է, որ նախաքննական մարմնի կողմից մի շարք եվրոպական երկրներ նամակներ են ուղարկվել, եւ կոնկրետ հարցադրումներ են արվել ու հիմա էլ սպասում են կոնկրետ պատասխանների: Հիշեցնենք, որ ԱԱԾ-ն հայտնել էր «Մրգենի» ՍՊ ընկերության փաստացի սեփականատիրոջ, ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանի, նույն ընկերության տնօրենի եւ պահեստապետի նկատմամբ, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց, մասնավորապես՝ 1 տոննա կոկաին ապօրինի իրացնելու եւ թմրամիջոցի մաքսանենգություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին: Վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը, նախկին պատգամավորի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

ՀՀ Քննչական կոմիտեում լարված աշխատանքային օրեր են: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Արթուր Պողոսյանը հրահանգել է ստուգել ողջ համակարգը, ինչը համակարգում լուրջ դժգոհության ալիք է բարձրացրել: Հիշեցնենք, որ երբ 2024 թ. նոյեմբերի 28-ին 6 տարի ժամկետով ՀՀ քննչական կոմիտեի նախագահ նշանակվեց Արթուր Պողոսյանը, անմիջապես մասնագիտական շրջանակները սկսեցին քննարկել հարցը, որ Աննա Վարդապետյանի մոտ նա գլխավոր քննիչ է աշխատելու: Տպավորությունները կյանքի կոչվեցին ավելի արագ, քան կարելի էր սպասել: Աննա Վարդապետյանի տեղակալ Արթուր Պողոսյանը չի կարողանում դուրս գալ ենթակայի իր կարգավիճակից եւ, լինելով ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար, աչքի է ընկնում դատախազության հանձնարարությունները կատարող մարմնի ղեկավարի հատկություններով: Հիմա ասվածը հիմնավորենք փաստերով. Աննա Վարդապետյանի կողմից մերժված դատախազները, որոնց Արգիշտի Քյարամյանը նշանակել էր աշխատանքի, անմիջապես ազատվեցին Քննչական կոմիտեում աշխատանքից՝ ՀԿԳ վարչություններից մեկի պետ Պետրոս Պետրոսյանը, Երեւան քաղաքի քննչական վարչություններից մեկի բաժնի պետ Գոռ Ալեյանը եւ այլք: Հիմա էլ Կոմիտեի նախկին ղեկավար Քյարամյանի սխալները, բացթողումները բացահայտելու համար թերեւս հրահանգվել է ստուգումներ սկսել համակարգում: Կոմիտեի ներսից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ քննիչները մինչեւ ուշ գիշեր աշխատում են, կարգի են բերում փաստաթղթերը, որ զեկուցեն վերադասին՝ ամեն ինչ կարգին է: Բայց առաջիկայում մեծ արտահոսք է սպասվում Քննչական կոմիտեից, քանի որ շատ քննիչներից ստանում ենք դժգոհություն առ այն, որ այսպիսի ծանրաբեռնվածությամբ հնարավոր չէ արդյունավետ աշխատել, ավել լավ է՝ փաստաբանությամբ զբաղվեն:



Մոտ մեկ շաբաթ առաջ գերժամանակակից, գերհագեցած հիվանդանոցի համբավ ունեցող «Ուիգմոր» բժշկական կենտրոնում պլաստիկ վիրահատության հետեւանքով մի կին մահացավ՝ Մ. Մ.-ն: Սա եւս մեկ առիթ է՝ խոսելու Ուիգմոր կլինիկայի ստացած լիցենզիայի մասին, որը ակնհայտորեն մութ եւ կասկածելի պատմություններով է ուղեկցվում: Նրանց տրվել է լիցենզիա՝ առանց փորձարկելու հնարավորությունները: Նախ արձանագրենք, որ պլաստիկ վիրահատությունները պլանային վիրաբուժական միջամտություններ են եւ, ի տարբերություն այլ վիրաբուժական միջամտությունների, չեն իրականացվում անհետաձգելի կամ շտապ իրավիճակներում: Եթե անհետաձգելի վիրահատություն պահանջող վիճակներում վիրահատական սեղանին բուժառուի մահվան հավանականություն է լինում, ապա պլաստիկ վիրահատությունների ժամանակ հիվանդի մահվան հավանականությունը բացառվում է: Վերջապես, մարդը պլանավորել էր գեղեցկանալ, ոչ թե մահանալ: Հիշեցնենք, որ շուրջ մեկ տարի առաջ՝ 2024 թվականի ապրիլին, քննչական կոմիտեում հարուցված քրեական վարույթի շրջանակներում բերման էին ենթարկվել նախարար Ավանեսյանի «սրտի «Ուիգմորի»» տնօրեն Զավեն Քոլոյանը, նախարար Ավանեսյանի ընտանիքին պատկանող «Արֆարմացիա»՝ դեղ ներկրող ընկերության եւ նույն «սրտի ուիգմորների» նախկին ֆինանսիստ, պետական առողջապահական գործակալության արդեն նախկին պետ Ահարոն Բարսեղյանը, ինչպես նաեւ լիցենզավորման գործակալության մեկ աշխատակից՝ Տիգրան Ասլաբադյանը: Քննչական կոմիտեում հարուցված քրեական գործից հետո առողջապահության նախարարությունում լուրեր տարածվեցին, որ, ի թիվս այլ հարցերի, իրավապահ մարմինների մոտ կասկածներ էին առաջացել նաեւ 2023 թվականին բացված եւ անմիջապես 600 միլիոն դրամի պետական պատվերի արժանացած անփորձ եւ անհայտ «Ուիգմոր» հիվանդանոցի լիզենզավորման գործընթացի օրինականության մասին: ⇨ էջ 4

ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

7 ՏԱՐԻ ՀԵՏՈ ԶԱՐԹՆԵԼ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Է ՓՈԽՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ԱԻՄ առաջնորդ Պարույր Հայրիկյանի հետ: Խոսել ենք վարչապետի՝ նոր Սահմանադրություն փոխելու հայտարարության մասին:

-ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Հայաստանում պետք է անցկացվի հանրաքվե, քանի որ մեզ անհրաժեշտ է նոր Սահմանադրություն: Նրա կարծիքով՝ գործող Սահմանադրությունը լեգիտիմության հետ լուրջ խնդիրներ ունի: Ըստ Ձեզ՝ ինչի՞ մասին է խոսքը, եւ Դուք գործող Սահմանադրությունը ոչ լեգիտիմ համարո՞ւմ եք, ինչո՞ւ է Նիկոլ Փաշինյանն անընդհատ ձգտում փոխել գործող Սահմանադրությունը:

-Նախ բավական հստակ ասենք, եթե սա լեգիտիմ Սահմանադրություն չէ՝ կարող է նաեւ ճիշտ լինել եւ ճիշտ է, այդ դեպքում ինչո՞ւ այսքան տարի սպասեց, ինչու չկատարեց իր հեգեւոր ուսուցիչ Լեւոն Տեր-Պետրոսյանի խնդրանքը, հորդորը: 2018 թվականին Լեւոն Տեր-Պետրոսյանն անմիջապես խնդրեց փոխել գործող Սահմանադրությունը: Ըստ էության, ինքը պարտավոր էր դա անել, քանի որ ինքը հեղափոխությունը հայտարարեց, եւ հեղափոխության ժամանակ հայտարարեց հին բարքերը փոխվում են: Սակայն հեղափոխության գլխավոր իմաստն էր մերժել այս Սահմանադրությունը: «Մերժել Սերժին», այսինքն՝ Սերժ Սարգսյանի իշխանությունը շարունակելու հնարավորությունը դա տառացիորեն նշանակում էր մերժել այդ Սահմանադրությունը: Ս. Սարգսյանը շարունակում էր պահպանել իշխանությունը հենց այդ Սամանադրությամբ: Հիմա յոթ տարի հետո զարթնեց, այդ աստիճանի անգրագետ կարող է լինել մարդը: Այս տեսակ բաները քաղաքական գործիչն ասում է միանգամից, ոչ թե հանկարծակի հայտարարել, որ Սահմանադրությունը ոչ լեգիտիմ է եւ պետք է քայլեր ձեռնարկենք: Մի կարեւոր բան ասեմ, որ իրավական է եւ պարզապես անմակարդակության ցուցանիշ է: Դու խոսում ես նոր Սահմանադրություն ստեղծելու մասին՝ միաժամանակ ընդգծելով, որ կառավարման համակարգում փոփոխություններ չեն կատարվել: Ընդանրապես նոր Սահմանադրությունն ընդունվում է այն բանի համար, որ փոխվում է կառավարման համակարգը: Ինչ վերաբերում է առաջին փուլում սկսած բարեփոխումներին, ապա դրանցում ինքը տապալվել է:

-Պարոն Հայրիկյան, Դուք բազմիցս նշել եք, որ հանձնաժողովն իր աշխատանքը տապալել է եւ ասել, որ սամանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնածողովը 1 միլիոն դոլար է հատկացրել իր աշխատանքների համար, ոակայն որ թափանցիկ է գործել: Ըստ էության հանրությանը հաշվետվություն չի ներկայացվել, թե ինչ նպատակով է այս գումարը օգտագործվել: Նաեւ հաշվի առնենք, որ ստացվում է, որ տարիներ շարունակ այս հանձնաժողովը գործել է, բայց հիմա ամբողջովին նոր Սահմանադրություն գրելու ուղղությամբ են աշխատանքները տարվում: Այսինքն ապարդյուն աշխատա՞նք են կատարել եւ վատնո՞ւմ է եղել: Որտեղի՞ց Ձեզ այս թվերի եւ տվյալների տեղեկությունը: Խնդրում եմ մի փոքր մանրամասնեք:

-Ես ինձ իրավունք եմ վերապահում, իրենք էլ պարտավոր են տեղեկություն տալ երբ դիմում ես, ես տարբեր առիթներով զրուցել եմ սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի պատասխանատուների հետ: Կան հանձնաժողովի անդամներ, որոնք ստանում են ամսական մաքուր 700 հազար դրամ աշխատավարձ, եւ այստեղ կարեւոր է՝ եթե դու ստեղծել ես հանձնաժողով, այս հանձնաժողովը ստեղծվել է նորմատիվ իրավական ակտով: Վերջին հանձնածողովի մասին նորմատիվ ակտն ընդունվել է 2022թ.: Դրանով նախատեսվել է, որ 2023թ. պետք է լինի պատրաստի նախագիծ: Նիկոլ Փաշինյանն ու իր մերձավորներն այնպիսի մոլորություն ունեն, որ այդ հանձնաժողովն աշխատում է անձամբ Նիկոլ Փաշինյանի համար: Ես նրա համար հարկեր չեմ տալիս,որ Նիկոլ Փաշինյանը իր հաճույքնրի համար ինչ-որ կարծիքներ ստանա: Այդ հանձնաժողովը մեր՝ քաղաքացիներիս տված հարկերի հաշվին էաշխատում եւ հաշվետու է մեզ՝ բոլորիս:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

20 ՄԼՆ ԴՐԱՄԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՎԱՐԴԵՆԻՍՈՒՄ Է՛Վ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ ԵՆ ԿԱՌՈՒՅՈՒՄ, Է՛Վ ՀԻՆՆ ԵՆ ՆՈՐՈԳՈՒՄ

Ուղիղ մեկ տարի առաջ ՀՀ ԱԺ դատգամավոր Թագուհի Թովմասյանը ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանից հետաքրքրվեց, թե երբ է կառուցվելու Վարդենիսի նոր հիվանդանոցը: Նախարարը անցած տարի՝ փետրվարի 28-ին, հայտարարեց, որ նախագծման աշխատանքներն ավարտական փուլում են, շուտով մրցույթ կհայտարարվի: Նոր մրցույթի մասին տեղեկություններ բաց աղբյուրներում «Ժողովուրդ» օրաթերթը չգտավ:

Փոխարենը, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը չորեքշաբթի այցելել էր Վարդենիսի բժշկական կենտրոն, որին ՀՀ պետական բյուջեի «Առողջապահական ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում եւ մոնիթորինգ» ծրագրի «Առողջապահական համակարգի պետական առեւտրային եւ ոչ առեւտրային կազմակերպություններին ֆինանսական աջակցության հատկացում» միջոցառման իրականացման նպատակով հատկացվել է 20 միլիոն ՀՀ դրամ գումար:

Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, ըստ մարզպետի, իրականացվում են «Վարդենիսի» ԲԿ հիվանդանոցային մասնաշենքի մասնակի ներքին հարդարման եւ ընթացիկ վերանորոգման աշխատանքներ՝ մինչեւ կմեկնարկի նոր բժշկական կենտրոնի կառուցումը:

Փաստորեն, նոր հիվանդանոցի կառուցումը, որը նախատեսված է Կառավարության կապիտալ ծախսերով, «ուշանում» է եւ դեռ պարզ չէ՝ երբ կսկսի կառուցվել: Իսկ նախարարը ասում էր՝ «շուտով»: Բայց միաժամանակ էլ մոտ 50 հազար դոլար է ծախսվում կոսմետիկ նորոգման համար:

Ի դեպ, նախարարը խոստացել էր նաեւ, որ պետք է այդ հաստատության մեջ դիահերձարան էլ կառուցվի, սակայն սայլը տեղից դեռ չի շարժվում: Առայժմ միայն հին հիվանդանոցն են «կարկատում»:

ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ԿՐԿԻՆ ՍՏԵԼ ԵՆ

Անդրանիկ Քոչարյանը հերթական անգամ ստել է ու սին հույսեր է տվել անհետ կորած զինվորների ծնողներին:

Այպիսով, դեռ 2025 թվականի հունվարի 30-ին անհետ կորած զինվորների ծնողներն ԱԺ-ում հանդիպել էին բարձրաստիճան պաշտոնյաների հետ, հանդիպումը նախաձեռնել էր ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը:

Ընդ որում, անհետ կորածների ծնողների մի մասին դահլիճ չէին էլ թողել, նստեցրել էին օթյակում:

Այդ ոչինչ չտվող հանդիպումից ծնողները դուրս եկան դժգոհ՝ հայտարարելով, որ որեւէ նոր բան իրենց չի ասվել, Անդրանիկ Քոչարյանը խոստացել է 1 ամիս ժամկետում կրկին հանդիպում կազմակերպել ԱԺ-ում:

1 ամիս ժամկետը արդեն լրացել է, իսկ խոստումը մնացել է օդում:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում անհետ կորած զինվորի ծնող տիկին Անահիտը փոխանցեց, որ իրենց հետ կապ չեն հաստատել, ոչ մի նորություն չկա: «Շատ փնթի եւ անպատասխանատու են իշխանությունները, իրենք չպե՛տք է տուն գնային, չպե՛տք է քնեին, մինչեւ վերջ այս հարցը պետք է լուծեին: Չգիտես ինչու՝ մեկը երկրում չէ, մյուսը առողջական խնդիր ունի.... պատրվակ են ման գալիս»,- ասաց անհետ կորածի մայրը:

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔ»-Ն ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Տարբեր շերտերի թուրք պաշտոնյաները շարունակում են պահանջել բացել «Զանգեզուրի միջանցքը»: Այս միտքը հերթական անգամ հնչեցրել է Ադրբեջանում Թուրքիայի դեսպանատան առեւտրային հարցերով գլխավոր խորհրդական Յակուբ Սեֆերը: «Այժմ ամենակարեւոր հարցը Զանգեզուրի միջանցքի բացումն է»,-ասել է նա, հաղորդում է ԱՊԱ-ն: Նա նշել է, որ միջանցքի բացումը մեծ ազդեցություն կունենա տարանցիկ երթեւեկության եւ առեւտրային հարաբերությունների ընդլայնման վրա: «Այս առումով Ալաթի տնտեսական գոտին շատ կարեւոր է, եւ տարածաշրջանը կդառնա լոգիստիկ հանգույց: Սակայն, միջանցքի երկայնքով նավահանգստային ենթակառուցվածքները պետք է ուժեղացվեն Ղազախստանում եւ Թուրքմենստանում: Հաջորդ հարցն Ալյաթ նավահանգստում Ro-Ro նավատորմի թարմացումն է: Այս նավերը, որոնք ներկայումս շահագործվում են, շատ հին են», - ավելացրել է Յակուբ Սեֆերը: Ավելի վաղ, նույն միտքը հնչեցրել էր Թուրքիայի փոխնախագահ Ջեւդեթ Յըլմազը:

Հատկանշական է, որ բոլոր դեպքերում Թուրքիան ամբողջությամբ անտեսում է Հայաստանի «միջանցքի» տարածքային պատկանելությունը: Ոչ մի դեպքում Հայաստանի մասին ընդհանրապես հիշատակում չկա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ «ԽՈՉԸՆԴՈՏ» ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԽՈՍՔԻ ԴԵՄ

ՔՊ ՆԻՍՏԸ ԿԱՅԱՑԱՎ ԿՈՅՈՒՂԱՔՐԵՐԻՑ ՀՈՍԱՆՔԱԶՐԿՎԱԾ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Երեկ՝ առավոտյան, Ազգային ժողովում ֆինարկում էր նախատեսված «ՀՀ կառավարության գործունեության լեգիտիմությունը» թեմայով, որը կազմակերպվել էր ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահի պաշտոնից աղօրինաբար հեռացված պատգամավոր Թագուհի Թովմասյանի եւ հանրային-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանի կողմից: Թեղեռ հանդիպումը օրեր առաջ էր պլանավորված եւ պետք է կայանար երեկ՝ ժամը 11:00-ին, նիստից առաջ արհեստական խոչընդոտ ստեղծվեց. ինչպես ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը գրեց սոցցանցի իր պաշտոնական էջում, ԱԺ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանը առավոտյան 9:30 գրավոր տեղեկացրել է, թե կոյուղաջուր է լցվել նիստի համար նախատեսված 334 դահլիճի էլեկտրական լարերի վրա, սենյակը հոսանքազրկված է, եւ չեն կարող տրամադրել այն:

Արդեն կեսօրին պատգամավորը տեղեկացրեց, որ քննարկումից առաջ, երբ խորհրդարանում տեսել էին, որ նախատեսված ժամին (11:00) բոլորը հավաքվել են նիստին մասնակցելու, 11:26 պատգամավոր Թովմասյանը նոր գրություն է ստացել, թե ԱԺ դահլիճներից մեկը ազատ է, եւ հանդիպումը կարող է այնտեղ կայանալ: ՔՊ-ականները նախապես ամրագրել էին դահլիճներ, ապա ընդդիմադիր պատգամավորի քննարկումից րոպեներ առաջ չեղարկել են դահլիճների զբաղվածությունը: «Սա նշանակում է, որ ուղիղ քաղաքական հրահանգ էր տրված, որպեսզի տապալեին քննարկումը եւ չխոսվեր Նիկոլ Փաշինյանի ու նրա կառավարության լեգիտիմության մասին:

Սակայն, չնայած ստեղծված արհեստական խոչընդոտին, ԱԺ Բաղրամյան մուտքի քաղաքացիների ընդունելության սրահում քննարկումը, այնուամենայնիվ, կազմակերպվեց եւ բավականին լայն տարածում ունեցավ», - գրել է Թագուհի Թովմասյանը:

Սակայն ամենահետաքրքիրն ու զավեշտալին դեռ առջեւում է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հանդիպումից մոտ մեկ ժամ հետո՝ ժամը 15:00-ին, ՔՊ խմբակցության նիստը նույն հոսանքազրկված դահլիճում կայացել է: Այսինքն՝ 334 դահլիճը հոսանքազրկված էր, կոյուղաջրերով լի էր ու այնտեղ «անհնար» էր որեւէ հանդիպում կազմակերպել, քանի որ ընդդիմադիր խոսք պետք է հնչեր: Իշխանությանը կոյուղաջրերը չխանգարեցին հավաքվել ու նույն դահլիճում նիստ անել:

Ահա այն ամենը, ինչ պետք է իմանալ Ալեն Սիմոնյանի պատկերացրած ժողովրդավարության մասին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՐՏԻՆ

Էդգար Ղազարյանի գործով դատաքննությունը կմեկնարկի հավանաբար մարտի երկրորդ կեսին: Այս մասին հայտարարություն է տարածել Հինգ իրավապաշտպանների նախաձեռնությունը: «Էդգար Ղազարյանի վերաբերյալ «ՍԴ դատավորների» գործով հայտարարվեց նախաքննության ավարտ: Դատաքննությունը կմեկնարկի հավանաբար մարտի երկրորդ կեսին»,-ասված է հայտարարության մեջ: Հիշեցնենք, որ Էդգար Ղազարյանին մեղադրանք է առաջադրվել ՔՕ 490-րդ հոդվածի երկրորդ մասով՝ դատավորներին արատավորելն իրենց գործունեության համար. դատարանը սահմանափակել էր հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանի խոսքը՝ կիրառելով վարչական վերահսկողություն:

ԴԵՍՊԱՆԸ ՄԱՐՔ Է ՄԵԿՆԵԼ

«Այցելում եմ Վայոց ձորի մարզ: Վայոց ձորի մարզը գտնվում է Ադրբեջանի կողմից մասնակիորեն օկուպացված հայկական տարածքի հենակետային հատվածում: Այն ռազմավարական նշանակություն ունեցող մարզ է: Այստեղ է գտնվում ԵՄ դիտորդական առաքելության (EUMA) կենտրոնականությանը»,- այս մասին X-ի իր էջում գրել է Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դրկոտինյին:

ԿԵՆՏՐՈՆԱՑԱԾ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հայաստանում բնակչության թվաքանակը 2024թ. հատել է 3 մլն-ի շեմը: 2024 թվականին ՀՀ մշտական բնակչությունը կազմում է 3 միլիոն 75. 800 մարդ, այս մասին տեղեկացնում է Հայաստանի վիճակագրական կոմիտեն: 2023-ին ՀՀ բնակչության թիվը կազմել է 2 մլն 991.200, 2022-ին՝ 2 մլն 937.500, 2021-ին՝ 2 961.400 եւ 2020-ին՝ 2 մլն 963.300: Ըստ ներկայացված տվյալների՝ բնակչության զգալի մասը կենտրոնացած է մայրաքաղաք Երեւանում: Այստեղ է ապրում 1 մլն 141.300-ը:

ԱԼԻԵՎԻ ՆՊԱՏԱԿԸ

Արցախի քաղաքական էլիտան պատանդառված է, որովհետեւ Ալիեւի նպատակը մեկն է՝ ցուցմունքներ կորզելով հասնել նրան, որ միջազգային ատյաններում Հայաստանը ճանաչվի ռազմական հանցագործ: Այս մասին ասել է Ազգային Ժողովի նախկին պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը: «Մտահոգություն հայտնելը բավարար չէ, գործուն քայլեր են պետք: Դրանցից մեկը՝ դադարեցնել Ադրբեջանի հետ բանակցությունները, մինչ այն պահը, երբ ազատ կարձակվեն բոլոր ռազմագերիները»,- ասել է նա:

ՀՆԱՐԱՎՈՐ Է ԿՐՃԱՏՎԻ

Եվրամիության նկատմամբ ԱՄՆ-ի մաքսատուրքերի սահմանումը կարող է հանգեցնել համաշխարհային տնտեսության մասնատման, ինչը միջնաժամկետ հեռանկարում կարող է հանգեցնել համաշխարհային ՀՆԱ-ի 7%-ով կրճատման: Այս մասին հայտարարել է էկոնոմիկայի հարցերով եվրահանձնակատար Վալդիս Դոմբրովսկիսը: Նա ափսոսանք է հայտնել մաքսատուրքեր սահմանելու՝ Վաշինգտոնի մտադրության կապակցությամբ եւ դրանք անվանել չարդարացված: «Ավելին, դրանք խնդրահարույց կլինեն տնտեսական աճի համար ինչպես ԵՄ-ում, այնպես էլ ԱՄՆ-ում»,- ասել է եվրահանձնակատար:

Արժույթի միջազգային հիմնադրամը գնահատում է, որ եթե այս տնտեսական մասնատումը տեղի ունենա, եւ առեւտուրը կենտրոնանա հիմնականում որոշակի տնտեսական բլոկների ներսում, ապա համաշխարհային ՀՆԱ-ն միջնաժամկետ հեռանկարում կարող է կրճատվել 7 տոկոսով:

ԳԼՈՒՄՈՎԸ՝ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Ինչ կարող ենք մենք տալ Ռուբեն Վարդանյանին, բացի պաշտպանությունից: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց հաղորդավար Եգոր Գլումովը:

«Ինձ թվում է մենք այդ պաշտպանությունն էլ չենք կարողանում տալ, որովհետեւ ամեն ինչ դեռ շարունակվում է ու ցավոք սրտի շարունակվելու է: Ցավալի է, որ այստեղ այսքան քիչ մարդ կա, որովհետեւ միայն այն մարդիկ, որոնց Ռուբեն Վարդանյանը լավություն է արել, գային այստեղ, տեղ ու դադար չէր լինի: Բայց տեսնում եմ, որ մենք սրտացավ ազգ չենք»,- ասաց նա:

Հիշեցնենք, որ, երեկ, ՀՀ արտաքին գործերի նախարարության շենքի, ապա՝ կառավարության մոտ բողոքի ակցիաներ էին՝ բարձրաձայնելու Բաքվի բանտերում պահվող Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության, մյուս գերիների հարցը, մասնավորապես Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանի, ով հացադուլ է հայտարարել, ու հրապարակված լուսանկարներից երեւում է, որ խոշտանգվել է:

ՋԱՆՔ ՉԵՆ ԳՈՐԾԱԴՐՈՒՄ

Իրենք Բաքվի բանտում են պայքարում, մենք՝ այստեղ: Այս ասել է Ստեփանակերտի քաղաքապետ Դավիթ Սարգսյանը:

«Իրենք այնտեղ են պայքարում, մենք՝ այստեղ: Մենք էլ պայքարում ենք, որ իրենք վերադառնան: Իշխանության կողմից բավարար ջանքեր չեն գործադրվում Բաքվից գերիներին վերադարձնելու համար»,-ասել է Սարգսյանը:

ՂԵԿԱՎԱՐԸ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ Է ԱՅՑԵԼԵԼ

Երեկ Քննչական կոմիտե է այցելել Մերձավանի համայնքի ղեկավար Միհեր Ախտոյանը: Այս մասին ArmLur.am-ին հայտել են ականատեսները: Նրանք նկատել են՝ ինչպես է Ախտոյանը մտել Կոմիտե: Ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ փետրվարի 5-ին Փարաքար խոշորացված համայնքի Մերձավան բնակավայրում հնչել էին կրակոցներ, դրանք եղել են հենց Մերձավանի համայնքապետարանի մոտ: Վիճաբանությունը սկսվել էր կենցաղային հարցերի շուրջ ծագած անհամաձայնությունից: Գյուղում մեքենան արագ վարելու պատճառով կռվի մասնակիցները սկսել են հայհոյել, քարերով եւ բռունցքներով հարվածել իրար: Վիճաբանությունը այնքան է թեժացել, որ մասնակիցներից մեկը սկսել է կրակոցներ արձակել: Արդյունքում զոհվել է Մերձավան համայքնի ղեկավար Միհեր Ախտոյանի հորաքրոջ տղան:

Նշենք, որ Քննչական կոմիտեն չի արձագանքում ArmLur.am-ի զանգերին:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՁՆՎԵՑ

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՌԵՑՎԵՑԻՆ

Կառավարությունը հետ կանգնեց սեփական համոզմունքներից եւ փետրվարի 27-ի կառավարության նիստում 6 ամսով հետաձգվեց հարկային օրենսգրքի փոփոխությունները:

Բանն այն է, որ 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՕ-340-Ն եւ ՀՕ-285-Ն հարկային օրենսդրության փոփոխությունները, որոնցով խստացվել են շրջանառության հարկի ռեժիմում գործողների համար վարչարարությունը եւ կրկնակի անգամ բարձրացվել են շրջանառության նկատմամբ հաշվարկվող դրույքաչափերը, լուրջ դժգոհություններ էին առաջացրել ՓՄՁ-ների շրջանում:

Նախորդ տարին տնտեսվարողների, փոքր եւ միջին բիզնեսմենների համար ավարտվեց խուճապով, քանի որ ՀՀ կառավարության ընդունած օրենքի համաձայն 2025 թվականից պետք է ավելանար Հայաստանի փոքր ու միջին բիզնեսի հարկային բեռը, ընդ որում շատերի դեպքում՝ հենց կրկնակի: Շրջանառության հարկը պատրաստվում էին բարձրացնել 5-ից մոտ 10 տոկոսով:

2025 թվականը մեկնարկեց բողոքի ակցիաներով. խոշոր շուկաների՝ Ոսկու շուկայի, Մալաթիայի շուկայի, Առինջի շուկայի տնտեսվարողները՝ փոքր եւ միջին բիզնեսի ներկայացուցիչները, 2-3 շաբաթ անդադար պայքարում էին հարկային օրենսգրքի փոփոխության դեմ: Կառավարությունում Էկոնոմիկայի, Ֆինանսների նախարարների եւ ՊԵԿ ներկայացուցիչների հետ քննարկումներից հետո Ազգային ժողովում նախաձեռնվեց քննարկում:

ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին կից ՓՄՁ աշխատանքային խումբը փետրվարի 7-ին արտահերթ քննարկումով անդրադարձել էր ՓՄՁ-ներին վերաբերող հարկային փոփոխություններին: Բազմաթիվ բողոքներից հետո, այդ նույն օրը Ազգային Ժողովում ՔՊ-ական պատգամավոր եւ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյանը հայտարարեց, որ հարկային օրենսգրքի տնտեսվարողներին ցանկալի փոփոխությունները չեն լինելու եւ հստակ ձեւակերպեց, որ օրենքն անժամկետ ոչ մի դեպքում հնարավոր չէ հետաձգել:

Փետրվարի 27-ին կառավարության նիստում, սակայն, ամեն բան փոխվեց հօգուտ տնտեսվարողների. վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ «շրջանառության հարկ վճարողների համար վեցամսյա անցումային շրջան ենք սահմանում՝ մինչեւ հուլիսի 1-ը ներառյալ»:

Համաձայն այ որոշման՝ շրջանառության հարկ վճարողների համար վեց ամիս անցումային ժամանակաշրջան կսահմանվի: Կառավարության նիստում ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանն ասաց. «Հարկման նոր կանոնների պայմաններում ժամանակավոր բնույթ ունեցող խնդիրն այն է, որ առք ու վաճառքի գործունեությամբ զբաղվող շրջանառության հարկ վճարողներից շատերը 2025 թվականի հունվարի մեկի դրությամբ ունեցել են նախկինում ձեռք բերված զգալի ապրանքային մնացորդներ, որոնց համար կամ չունեն ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթեր, կամ ունեն ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթեր, սակայն դրանց գծով մինչեւ 2025 թվականի հունվարի մեկը շրջհարկը նվազեցվել է ընդամենը 4 տոկոսի չափով՝ ներկայիս 9,5 տոկոսի չափով նվազեցման հնարավորության փոխարեն: Այս առումով անհրաժեշտ է, որպեսզի ներկա անցումային ժամանակաշրջանում, որը մեր գնահատմամբ ընդգրկելու է 2025 թվականի առաջին եւ երկրորդ եռամսյակները, կառավարությունն աջակցի, որպեսզի շրջանառության հարկ վճարողները կարողանան ցածր հարկային բեռի միջավայրում իրացնել նախկինում առանց փաստաթղթերի ձեռք բերված ապրանքները: Այս համատեքստում շատ կարեւոր է, որպեսզի շրջհարկ վճարողները, օգտագործելով կառավարության աջակցության այս անցումային ժամանակաշրջանը, իրենց ձեռնարկատիրական գործունեության մոդելը վերանայեն այնպես, որ 2025 թվականի հուլիսի մեկից հետո ձեռքբերումները եւ այլ ծախսերը կատարեն առավելապես փաստաթղթավորմամբ, որի պարագայում ոչ միայն հարկային բեռի բարձրացում չի լինի, այլ նաեւ կարող է լինել հարկային բեռի նվազեցում»:

Նիկոլ Փաշինյանը հավելեց. «Ըստ էության մենք վեցամսյա անցումային շրջան ենք նախատեսում՝ մինչեւ հուլիսի մեկը ներառյալ: Ինչքան 5 տոկոսից ավելի հարկ կգոյանա, մենք այդ ամբողջ գումարը կվերադարձնենք տնտեսվարողներին»:

Ըստ էության այս հետ քայլով կառավարությունը նաեւ վայր դրեց զենքերը եւ ենթարկվեց տնտեսվարողների ճնշումներին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԳՈՒՅԵ ՆԱԽԱՐԱՐԻ ՍԻՐԵԼԻ «ՈՒԻԳՄՈՐԻ» ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ ՀՐԱՀԱՆԳՎԱԾ ԷՐ ՀԱՊՃԵ՞Պ ՏԱԼ

Սկիզբը՝ առաջին էջում

Քննչական կոմիտեում հարուցված քրեական գործից հետո առողջապահության նախարարությունում լուրեր տարածվեցին, որ, ի թիվս այլ հարցերի, իրավապահ մարմինների մոտ կասկածներ էին առաջացել նաեւ 2023 թվականին բացված եւ անմիջապես 600 միլիոն դրամի պետական պատվերի արժանացած անփորձ եւ անհայտ «Ուիգմոր» հիվանդանոցի լիզենզավորման գործընթացի օրինականության մասին: Նշվում էր, որ այդ գործակալության աշխատակից Ասլաբադյանին բերման ենթարկելու հանգամանքը պայմանավորված է եղել դրանով:

Տեղեկացնենք, որ նախարարության ներկայիս լիցենզավորման գործակալության պետ Վահե Ալեքսանյանը լիցենզավորման գործակալությունում բաժնի պետ էր դեռ մոտ մեկ տասնամյակ առաջ: Արդեն շուրջ 7 տարի է, որ նա գործակալության պետն է:

Հայտնի է նաեւ, որ «Ուիգմոր» կանանց եւ երեխաների հիվանդանոցի լիցենզավորման գործընթացը 2022 թվականին կազմակերպվել է աննախադեպ արագությամբ՝ առաջնորդվելով երեւի Ասսոեր всегда готов սկզբունքով: Իսկ միգուցե «Ուիգմոր» կանանց եւ երեխաների հիվանդանոցին մեծ արագությամբ լիցենզավորելու համա՞ր է Վահե Ալեքսանյանի՝ անհայտ մասնագիտությամբ եւ դատական բժշկության հետ որեւէ կապ չունեցող եղբայր Մարտին Ալեքսանյանին առողջապահության նախարարությունը «պարգեւատրել» Դատաբժշկական գիտագործնական կենտրոնում «փարթամ» աշխատանքով:

ԱՊՕՐԻՆԻ ԾԱՌԱՀԱՏՈՒՄ Է ԿԱՏԱՐՎԵԼ

Փետրվարի 27-ին Համայնքային ոստիկանության Վեդիի բաժնում ստացվել է օպերատիվ տեղեկություն, որ Ուրցաձոր գյուղի մի բնակիչ Ուրցաձոր տանող ճանապարհին ծառ է հատում: Ոստիկանները մեկնել են նշված վայր:

Ոստիկանության փոխանցմամբ, Ուրցաձորի 59-ամյա բնակիչը Դաշտաքար-Ուրցաձոր ճանապարհի աջակողմյան հատվածում ապօրինի հատել է մեկ ուռենի: Քաղաքացին հրավիրվել է Համայնքային ոստիկանության Վեդիի բաժին, իսկ ուռենիով բարձված կցորդիչը տեղափոխվել է բաժնի պահպանվող հատուկ տարածք: Կազմված փաստաթղթերը փոխանցվել են Վեդիի քննչական բաժին:

ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՈՉ ՄԻ ԾՐԱԳԻՐ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ

Կառավարության ծրագրով նախատեսված դատաիրավական բարեփոխումներից ոչ մի ծրագիր այս իշխանությունը լիարժեք չի իրականացրել, միայն 2 ծրագիր կա, որ կիսաս-ղռաս իրականացվել է. մեկը դատավորների աշխատավարձի բարձրացումն է, երկրորդը դատավորների քանակն է ավելացել, թեեւ մեզ պետք էր 150 դատավոր ավելացնել, իրենք 30-ն են ավելացրել: Այս մասին նշել է ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանը:

Նրա խոսքով՝ նախատեսվում էր դատավորների բարեվարքության ստուգում, բայց հարց է առաջանում՝ բարեվարքությունը ստուգողների բարեվարքությունը ստուգվա՞ծ է: Ըստ Վարդազարյանի՝ Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումն անթույլատրելի էր, քանի որ առանձին հակակոռուպցիոն օրենսդրություն չկա, կա մեկ Քրեական օրենսգիրք, մեկ Քրեական դատավարության օրենսգիրք:

«Այսինքն՝ այդ դատարանը ոչ մի բանով չի տարբերվում մյուս դատարաններից: Դա շատ արագ ձեւավորված, իշխանության քիմքին հաճելի մարդկանցով ձեւավորված դատարան էր, որտեղ, կոպիտ ասած, ընդամենը կատարում են պատվերներ: Լինում են, իհարկե, դեպքեր, երբ դատարանը կարողանում է իշխանությանը ոչ այդքան հաճելի որոշում կայացնել, բայց դա 1 տոկոս է կազմում»,- ընդգծել է նա: ԲԴԽ նախկին նախագահի խոսքով՝ 2018 թվականից սկսած՝ արդարադատության վիճակը Հայաստանում ոչնչով չի փոխվել:

«Դատավորները քաղաքական իշխանության քիմքին հաճելի դատական ակտեր են հրապարակում եւ այս պրոցեսը խորանում է: Ընդ որում, մենք անդառնալիության կետն էլ ենք անցել, այսինքն՝ մի պահ ընդունենք, որ հենց այսօր իշխանությունը գնում է, գալիս է ազգին նվիրյալ իշխանություն եւ ասում՝ «դե եկեք հետ դառնանք», բայց այլեւս հետդարձի ճանապարհ չունենք: Լրջագույն դատական ռեֆորմի կարիք ունենք, լյուստրացիա, երբ բոլորն ազատվում են պաշտոններից, բոլոր դատարանները լուծարվում են, շատ արագ ստեղծվում է մի նոր հանձնաժողով, նոր դատարաններ ենք ստեղծում: Փորձ կա, նման բան տեղի է ունեցել Խորհրդային Միության փլուզումից հետո եւ վատ արդյունք չի տվել: Ցավոք սրտի, այդ անդառնալիության կետը անցել ենք: Հայաստանին նոր դատական համակարգ է հարկավոր»,- հավելել է Ռուբեն Վարդազարյանը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 25-ից 26-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 119 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՉՎՃԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՄԱՐ ԴԱՏԻ է ՏՎԵԼ

Դիլիջանի պետական քոլեջի նախկին տնօրեն Գրետա Թամրազյանը 2024 թ. ապրիլի 5-ին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի աշխատավարձի բռնագանձման պահանջի մասին՝ խնդրելով պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել 2015 թ. սեպտեմբերի 1-ից մինչեւ 2017 թ. փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածի համար «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար նախատեսված եւ հայցվորին չվճարված աշխատավարձը, ինչպես նաեւ այդ աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար տուժանք՝վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը: 2024թ. նոյեմբերի 7-ին Դիլիջանում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Նանա Դալլաքյանը վճռել է Գ. Թամրազյանի հայցը մերժել, Գ. Թամրազյանից հօգուտ «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի բռնագանձել 100 հազար դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: Գ. Թամրազյանի ներկայացուցիչը այդ վճռի դեմ բողոք է ներկայացրել քաղաքացիական վերաքննիչ դատարան, այն ընդունվել է դատարանի վարույթ: Գ. Թամրազյանը նախկինում քրեական հետապնդման է ենթարկվել: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2006 թ. -ից աշխատելով ՀՀ կրթության եւ գիտության նախարարության «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն, հանդիսանալով պաշտոնատար անձ, ղեկավարելով քոլեջի կրթական, գիտական, արտադրական, ֆինանսական գործունեությունը, 2014թ.-ին ստացել եւ յուրացրել է քոլեջի բազմաթիվ ուսանողների կրթաթոշակների գումարները: 2020թ. օգոստոսի 7-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը վճռել է ճանաչել եւ հռչակել Գրետա Թամրազյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (երկու դրվագով), ՀՀ քրեական օրենսգրքի 38-325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ եւ նրան արդարացնել: Դատախազությունը վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել: 2021թ. մայիսի 12-ին քրեական գործերով վերաքննիչ դատարանը որոշել է մեղադրող Էդ. Հարությունյանի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն, Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2020թ. օգոստոսի 7-ի թիվ դատավճիռը բեկանել, Գ. Թամրազյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված երկու, 38-325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մեկ հանցագործություններ կատարելու համար, եւ նրան քրեական պատասխանատվությունից ազատել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: 2021թ. հոկտեմբերի 28-ին վճռաբեկ դատարանը որոշել է Գ. Թամրազյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թ. մայիսի 12-ի որոշման դեմ պաշտպան Ի. Պետրոսյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆ ԳԵՐԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բաքվում ապօրինաբար պահվող Ռուբեն Վարդանյանի եւ մյուս գերիների հարցով ակցիայի մասնակիցները, երեկ, հավաքվել էին Հայաստանի արտաքին գործերի նախարարության շենքի դիմաց:

Նրանք պահանջում են անհապաղ հրավիրել ՀՀ-ում հավատարմագրված դիվանագետներին՝ ներկայացնելով Բաքվում կատարվող ապօրինություններն ու պահանջելով այդ ուղղությամբ առարկայական քայլերի իրականացում:

Ակցիայի մասնակիցների խոսքով անընդունելի է նաեւ միջազգային հանրության լռությունը, որով մասնակից են դառնում կատարվող հանցագործություններին՝ բավարարվելով անատամ կոչերով: «Մենք ԱԳՆ-ից պահանջում ենք՝ հրավիրել Հայաստանում հավատարմագրված դիվանագետներին՝ ներկայացնելով Բաքվում մեր հայրենակիցների նկատմամբ կատարվող ապօրինությունները՝ պահանջելով առարկայական քայլերի իրականացում այս ուղղությամբ: ԱԳՆ-ն պետք է անհապաղ հրավիրի Հայաստանում հավատարմագրված միջազգային բոլոր դիվանագետներին եւ նրանց հետ աշխատի՝ բանտարկվածներին հայրենիք վերադարձնելու համար»,-նշել են մասնակիցները:

Անդրադառնալով հայ ռազմագերիների, պատանդների հարցով ԱԳՆ-ի վերջին հայտարարությանը՝ նրանք փաստում են, որ միայն խոսքերով ոչինչ անել հնարավոր չէ, պետք է գնալ գործողությունների: Ակցիայի ընթացքում ընթերցեցին նաեւ Բաքվում ապօրինաբար պահվող, Լեռնային Ղարաբաղի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի հայտարարությունը, որն արել է փետրվարի 19-ին ընտանիքի հետ հեռախոսազրույցի ժամանակ: Վարդանյանը ներկայացրել է, թե ինչպիսի ապօրինություններ են տեղի ունենում Բաքվում իր եւ մյուս գերիների նկատմամբ: Ռուբեն Վարդանյանը նշել է, որ այդ գործընթացն իրականացվում է բոլոր իրավական նորմերի եւ ընթացակարգերի կոպտագույն խախտումներով:

Իր գործը քննվում է ապօրինի ռազմական, ոչ թե քաղաքացիական դատարանը: Ինքը լիարժեք հասանելիություն չի ունեցել մեղադրական եզրակացության եւ իր դեմ ներկայացված, այսպես կոչված, ապացույցներին, ադրբեջաներենով գրված 422 հատոր նյութերին: Իր փաստաբանի հասանելիությունը գործի նյութերին սահմանափակվում է, առգրավվում են գործի նյութեր, հոգեբանական ճնշում են գործադրում փաստաբանի վրա: Վարդանյանը նաեւ նշել է, որ իր միջազգային իրավաբանական թիմին արգելվել է շփվել կամ հանդիպել իր հետ եւ հասանելիություն ունենալ գործի նյութերին:

«Այս դատաքննությունը միայն իմ նկատմամբ չէ, սա փորձ է դատապարտելու բոլոր հայերին, որոնք օգնել եւ աջակից են եղել Արցախին ու նրա բնակչությանը: Սա հարված է՝ուղղված մի ողջ ժողովրդի: Ես հրաժարվում եմ այս ֆարսին մասնակցելուց»,-ընդգծել է Վարդանյանը:

Պետնախարարը դիմել է աշխարհի առաջնորդներին, միջազգային կազմակերպություններին, իրավապաշտպաններին, լրատվամիջոցների ներկայացուցիչներին, որ այդ գործընթացը նրանց ուշադրությունն է պահանջում: «Նման խախտումներն անարձագանք թողնելը ճանապարհ է հարթելու ապագա ողբերգությունների համար՝ թշնամանքի ու ատելության նոր ալիք հրահրելով: Միայն ճշմարտության, օրենքի ու հումանիզմի միջոցով է հնարավոր տարածաշրջանում արդարություն ու խաղաղություն ապահովել»,-շեշտել է Վարդանյանը:

Հիշեցնենք, որ արդեն 10 օր է, ինչ հացադուլ է հայտարարել:

«Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մեսրոպ Առաքելյանի խոսքով Բաքվում գտնվող հայրենակիցների համար Հայաստանի ԱԳՆ-ն պետք է գործողություններ իրականացնի: «Միեւնույն ժամանակ մենք հասկանում ենք, որ Ադրբեջանի առկա վարքագիծը հնարավորություն չի տալիս միայն Հայաստանի ուժերով այս հարցը լուծել: Սակայն Հայաստանը պետք է հանդիսանա այս հարցը միջազգային ատյաններում բարձրաձայնողը»,-ասել է Առաքելյանը՝ դժգոհություն հայտնելով Հայաստանի իշխանությունների ձեռնարկած գործողություններից:

Ակցիայի մասնակիցները երթով շարժվել են դեպի Հանրապետության հրապարակ՝կառավարության շենքի դիմաց՝այնտեղ շարունակելու ակցիան: Այնուհետեւ պետք է գնան ՄԱԿ-ի գրասենյակի մոտ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԻՎԱՆԴՆԵՐԸ ՇԱՏ ԵՆ

ԴՊՐՈՑՆԵՐՆ ՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԸ ՉԵՆ ՓԱԿՎԻ

Հանրապետությունում սուր շնչառական վարակներով պայմանավորված դպրոցներն ու մանկապարտեզները փակելու անհրաժեշտություն չկա: Այս մասին ասել է ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը: Ըստ նրա ամենօրյա ռեժիմով մոնիթորինգ են իրականացնում մի քանի ուղղություններով:

«Վստահ եղեք, մենք ամենօրյա մոնիթորինգ ենք իրականացնում թե մանկապարտեզներում, թե դպրոցներում, թե ամբուլատորիաներում, թե պոլիկլինիկաներում: Դիտարկում ենք ուսումնական հաստատություններում հաճախելիությունը, բուժհաստատություններ դիմելիությունը: Մեր ուշադրության կենտրոնում են հիվանդանոցները, վերակենդանացման բաժանմունքները: Մենք ունենք հստակ ուղեցույց այն մասին, թե որ դեպքում է պետք անցնել հավելյալ միջոցառումների վարակի բռնկումները զսպելու համար: Ասեմ, որ այս պահին իրավիճակն այնպիսին է, որ հավելյալ միջոցառումների անհրաժեշտություն չկա»,-ասել է Անահիտ Ավանեսյանը:

Անդրադառնալով այն դիտարկմանը, որ այս շրջանում փակվեն դպրոցներն ու մանկապարտեզները՝ Անահիտ Ավանեսյանը նշեց, որ դա անարդյունավետ միջոց է: Սուր շնչառական վարակների ակտիվացման սեզոնը սկսվում է նոյեմբերից եւ տեւում է մինչեւ մարտ: Այդ ընթացքում սուր շնչառական վարակների ակտիվացման պարագայում ուսումնական հաստատությունները փակելը տեղին չէ:

«Դա պարզապես անհնար է: Ի վերջո, ցանկացած միջոցառում պետք է խելամիտ իրականացվի, որպեսզի արդյունքն ունենանք: Առանձին դեպքերում մենք ունենք լուծումներ: Մասնավորապես, ունենք առանձին հնարավորություններ դպրոցների մասով: Եթե կոնկրետ դպրոցում բացակայությունների թիվը 25 տոկոսից աճել է՝ելնելով երեխաների հիվանդացությունից, ապա տվյալ դպրոցը կարող է անցնել հեռավար ուսուցման՝ համաձայնեցնելով կրթական գերատեսչության հետ: Այսինքն՝ մեխանիզմը ստեղծված է: Ամեն դեպքում կրկնում եմ, այս պահին եւ դրանից առաջ ունեցած համաճարակային իրավիճակը նման ցուցման հիմք չէ»,-ասել է նա:

Նա հավելեց, որ վերջին 3 օրվա ընթացքում հանրապետությունում սուր շնչառական վարակների հետ կապված հիվանդացության նվազման միտում է նկատվում: Ինչ վերաբերում է այն հարցին, թե դպրոցներում բժշկից տարված թուղթը հաշվի չի առնվում ու մտավախություն կա երեխաների բացակայության առնչությամբ, ապա նախարարը նշեց, որ այդ հարցը կքննարկի իր գործընկերոջ՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի հետ:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 5 պատահար. 2 մարդ զոհվել է, 4-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՔԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՄՈԲԻԼ Է ՆԵՐՄՈՒԾՎԵԼ

Պետական եկամուտների կոմիտեի փոխանցմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 24.11.2023թ. N 134 որոշմամբ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 2 ծածկագրին դասվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների համար 0% ներմուծման մաքսատուրքի արտոնությամբ ձեւակերպելու քվոտան 2025 թվականի համար սահմանվել էր 8000 հատ տրանսպորտային միջոցի մասով, որը ՀՀ կառավարության 28.11.2024թ. N 1876-Ն որոշմամբ բաշխվել է հետեւյալ կերպ.

1) 3000 հատից ոչ ավելի քանակով տրանսպորտային միջոցներ մաքսատուրքի արտոնությամբ կարող են ձեւակերպվել անմիջապես ավտոարտադրողի հետ կնքված դիլերական-դիստրիբյուտորական պայմանագրի (համաձայնագրի) շրջանակներում ներմուծում իրականացնող սուբյեկտների կողմից:

2) 5000 հատից ոչ ավելի քանակով՝ 1-ին կետում չնշված ներմուծում իրականացնող սուբյեկտների (այդ թվում՝ ֆիզիկական անձանց) կողմից:

Կոմիտեն տեղեկացնում է, որ 2025թ. փետրվարի 27-ը ներառյալ մաքսատուրքի արտոնությամբ ձեւակերպվել է.

1) 432 հատը կամ բաշխված քվոտայի (3000 հատ) 14.4%-ը՝ անմիջապես ավտոարտադրողի հետ կնքված դիլերական-դիստրիբյուտորական պայմանագրի շրջանակում ներմուծում իրականացնող սուբյեկտների կողմից:

2) 4718 հատը կամ բաշխված քվոտայի (5000 հատ) շուրջ 94.4%-ը՝ 1-ին կետում չնշված ներմուծում իրականացնող սուբյեկտների կողմից:

ԵՂԱՆԱԿՆ ԱՌԱՋԻԿԱ ՕՐԵՐԻՆ

Առաջիկայում սպասվում է առանց տեղումների եղանակ. օդի ջերմաստիճանն աստիճանաբար կբարձրանա: Ըստ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն»-ի, Երեւանում մարտի 1-ի գիշերը, 2-3-ին, 4-ի ցերեկը, 5-ին սպասվում է առանց տեղումների եղանակ:

Մարտի 1-ի եւ 3-ի երեկոյան, 4-ի գիշերը սպասվում է թույլ ձյուն:Մարզերում փետրվարի 28-ի եւ մարտի 2-ի ցերեկը, 3-ի գիշերը, մարտի 5-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Մարտի 1-ին, 2-ի գիշերը, 3-ի երեկոյան, 4-ի գիշերն առանձին շրջաններում սպասվում է ձյուն: Քամին հարավարեւմտյան 2-5մ/վ, փետրվարի 28-ի ցերեկը սպասվում է քամու ուժգնացում՝ 17-20մ/վ, մարտի 3-ին՝ 14-18մ/վ արագությամբ, լեռնային շրջաններում՝ բուք, ցածր հորիզոնական տեսանելիություն:

Օդի ջերմաստիճանը մարտի 1-ի ցերեկը կնվազի 2-3, Լոռիում, Տավուշում, Սյունիքում՝ 4-6 աստիճանով, այնուհետեւ ողջ հանրապետությունում ցերեկային ժամերին աստիճանաբար կբարձրանա 4-6 աստիճանով :

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»

ԿՏԵՂԱԲԱՇԽԻ ԴՈԼԱՐԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

Սույն թվականի մարտի 3-ից հունիսի 18-ն ընկած ժամանակահատվածում Բանկը կտեղաբաշխի իր կողմից թողարկված դոլարային եւ դրամային պարտատոմսերի հերթական տրանշերը:

Դրամային պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 3,0 մլրդ ՀՀ դրամ, որը ներառում է 300,000 հատ անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմս՝ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կազմում է 11.00 տոկոս, շրջանառության ժամկետը՝ 36 ամիս: Արժեկտրոնային եկամտի վճարումն իրականացվելու է կիսամյակային պարբերականությամբ: Դրամային պարտատոմսերի մարման ամսաթիվն է 03.03.2028թ.-ը: Տեղաբաշխման ենթակա դոլարային պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 10,0 մլն ԱՄՆ դոլար, որը ներառում է.

50,000 հատ անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմս՝ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով: Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կազմում է 6.25 տոկոս, շրջանառության ժամկետը՝ 60 ամիս: Արժեկտրոնային եկամտի վճարումն իրականացվելու է կիսամյակային պարբերականությամբ: Պարտատոմսերի մարման ամսաթիվն է 03.03.2030թ.-ը:

50,000 հատ անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմս՝ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով: Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կազմում է 5.50 տոկոս, շրջանառության ժամկետը՝ 36 ամիս: Արժեկտրոնային եկամտի վճարումն իրականացվելու է կիսամյակային պարբերականությամբ: Պարտատոմսերի մարման ամսաթիվն է 03.03.2028թ.-ը: Արժեկտրոնային եկամտի վճարումն իրականացվելու է կիսամյակային պարբերականությամբ: Տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսերը ներկայացվելու են ցուցակման «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ եւ ունենալու են շուկա ստեղծող:

Պարտատոմսերի Ծրագրային ազդագիրը ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից գրանցվել է 2024թ. հունիսի 19-ին: Ծրագրային Ազդագրի եւ թողարկման վերջնական պայմանների էլեկտրոնային տարբերակները կարելի է ներբեռնել www.aeb.am կայքից, իսկ թղթային տարբերակը հնարավոր է ձեռք բերել՝ այցելելով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակ, հասցե՝ ք. Երեւան, Ամիրյան 23/1:

Պարտատոմսերը կարող են ձեռք բերել ֆիզիկական եւ իրավաբանական անձիք՝ դիմելով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ:

*Հիշեցնենք, որ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹՎԱՅԻՆ ՔԱՐՏ՝ ՇԱՀԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Մինչեւ մարտի 20-ը բացիր անվճար Visa թվային քարտ Telcell Wallet-ում, ստացիր 2 x 5000 BON եւ հատուկ նվեր՝ iPhone 16 Pro, եթե դառնաս գումարային առավելագույն վճարումներ կատարած 3 մասնակիցներից մեկը:

Visa թվային քարտով հարմար է կատարել օնլայն գնումներ եւ վճարումներ ամբողջ աշխարհում: Քարտը չունի ֆիզիկական կրիչ, հետեւաբար ավելի անվտանգ է, քանի որ Telcell Wallet-ում պահվող անհատական տվյալները հեռու են բոլորի աչքերից:

Visa թվային քարտն ունի նաեւ հետեւյալ առավելությունները՝

անվճար ստեղծում եւ սպասարկում,

5 յուրահատուկ դիզայն,

արշավի շրջանակներում Visa թվային քարտով այլ քարտի փոխանցումներ կատարելիս մինչեւ 10,000 դրամի դեպքում՝ 50 դրամ՝ 100-ի դրամի փոխարեն իսկ 10,000 դրամ եւ ավելիի դեպքում՝ 0.5% միջնորդավճար՝ 0.8%-ի փոխարեն,

տարեկան 3% եկամուտ՝ հաշվի դրական մնացորդի վրա,

Apple Pay-ով եւ Google Pay-ով վճարելու հնարավորություն,

0% միջնորդավճարով համալրում 4500+ Telcell Terminal-ներով՝ 24/7:

Արշավին մասնակցելու համար անհրաժեշտ է ստեղծել Visa թվային քարտ Telcell Wallet-ում եւ դառնալ գումարային առավելագույն վճարումներ կատարած 3 մասնակիցներից մեկը: Վճարումների հաշվարկը կատարվելու է հետեւյալ կերպ. օրինակ՝ քաղաքացին կատարել է 3 վճարում կամ փոխանցում՝ 5000 դրամ + 72,000 դրամ + 13,000 դրամ: Ստացված գումարը համեմատվելու է մյուս մասնակիցների արդյունքների հետ, ինչի հիման վրա ընտրվելու են 3 հաղթողները: Արշավին մասնակցելու պայման չէ առավելագույն գործարքներ անելը: Դա միայն վերաբերում է iPhone 16 Pro շահելուն: Նույնը վերաբերում է BON-երին, այսինքն՝ քարտ բացելով յուրաքանչյուր ոք արդեն իսկ ստանում է BON-ներ: Ակցիան գործելու է մինչ մարտի 20-ը:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ԲԱՔՎԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ Է

ՀՅԴ Բյուրոյի հայտարարությունը Սումգայիթյան ջարդերի 37-րդ տարելիցի եւ Բաքվում ընթացող դատավարության կապակցությամբ. «1988 թ. փետրվարն ազդարարեց ազգային զարթոնքի եւ նորագույն ժամանակների ազատագրական պայքարի մեկնարկը, որի փառապսակը Հայաստանի վերանկախացումն էր եւ Արցախի Հանրապետության կերտումը: Ի պատասխան արցախահայության սահմանադրական իրավունքի իրացման խաղաղ պայքարի, Ադրբեջանը՝ Խորհրդային իշխանությունների անտարբերության պայմաններում, 1988 թ. փետրվարի 27-ից 29-ը կազմակերպեց եւ իրականացրեց Սումգայիթ քաղաքի հայ ազգաբնակչության արյունալի ջարդերը: Սումգայիթին հաջորդեցին Բաքվում, Գանձակում, Շամխորում եւ այլ քաղաքներում իրականացրած հայկական կոտորածներն ու էթնիկ զտումը»:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՍԱՐՅԱՆԱԿԱՆ

ՆԿԱՐՉԻ ԱՊՐԱԾ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Փետրվարի 28-ը հայ նկարիչ Մարտիրոս Սարյանի ծննդյան օրն էր: Սարյանի վրձնած կտավները հայտնի են ինչպես Հայաստանում, այնպես էլ օվկիանոսի ափերից դուրս:



Մարտիրոս Սարյանի նախնիները Անիից են, որոնք գաղթել են Ղրիմ եւ մասնակցել են տեղի հայկական գաղթավայրի հիմնադրմանը: Ղրիմի հայկական գաղթավայրի հիմնադրումից հետո Սարյանի նախնիները մասնակցել են նաեւ Նոր Նախիջեւանի հայկական գաղութի ստեղծմանը:

Ինչ վերաբերում է նկարչին՝ Մարտիրոս Սարյանին, ապա պետք է նշել, որ Սարյանն իր գիտելիքները ստացել է Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության եւ ճարտարապետության ինստիտուտում 1897-1904 թվականներին:

Սարյանն առաջին անգամ Կովկաս մեկնել է 1901 թվականի, այնուհետեւ եղել է Աշտարակում, Երեւանում, Վաղարշապատում, Սեւանում, իսկ արդեն 1902 թվականին Անիում: Իր այս ճամփորդությունների ընթացքում էլ Սարյանը «հափշտակելով», մանրակրկիտ ուսումնասիրելով իր իսկ ժողովրդի մշակույթը, սովորությունները, որմնանկարչությունը, ճարտարապետությունը եւ մշակույթին վերաբերվող ցանկացած փոքր թվացող մանրուք մեծ ներդրում է արել իր նկարչի կարիերայում:

Կարելի է անգամ ասել, որ ուսումնասիրելով պատմությունն ու մշակույթը, այդ ամենը վճռական ազդեցություն է ունեցել Սարյանի աշխարհայացքի եւ ստեղծագործական մեթոդի ձեւավորման ու զարգացման վրա, ինչն էլ հիմա տեսնում ենք նկարչի ստեղծագործություններում:

Մեծ Եղեռնը յուրաքանչյուր հայի համար ցավալի թեմա է, բայց նաեւ նուրբ եւ կարեւոր թեմա: 1915 թվականին Մեծ Եղեռնի օրերին Մարտիրոս Սարյանը աշխատել է «Հայերին օգնող մոսկովյան կոմիտեում»:

Մարտիրոս Սարյանը մեկնել է Էջմիածին՝ թուրքական սրից հալածական հայ գաղթականներին տեղում օգնություն ցուցաբերելու: Հովհաննես Թումանյանի, Գ. Հովսեփյանի եւ հայ այլ մտավորականների հետ, մոլեգնող համաճարակի պայմաններում, բոլոր ճիգերն ու ջանքերը գործադրել է Արեւելյան Հայաստանում ապաստանած վերջին արեւմտահայերին մահվան ճիրաններից փրկելու համար:

Այդ ամենն իհարկե ծանրագույն կերպով ազդեցություն է թողել Սարյանի հոգուն եւ սրտին: Բազում անքուն գիշերները եւ տեսած ծանր տեսարանների տպավորության տակ նկարիչը հոգեկան ցնցում է ստացել:

Երբ Հայաստանում հաստատվել են Սովետական բարքերը, Մարտիրոս Սարյանն իր ընտանիքի հետ 1921 թվականին տեղափոխվել է Երեւան եւ մշտական բնակություն հաստատել: Սարյանն իր վախճանը կնքել է Երեւանում 1972 թվականի մայիսի 5-ին: Հայրենի հողի բնապատկերները գերակշռում են Սարյանի նկարներում: Նայելով Սարյանի նկարներին կամա թե ակամա զգում ես հայկական շունչն ու հոգին: Եթե անգամ կապ չունեք նկարչության հետ եւ գուցե անգամ տիեզերագնաց եք, անզեն աչքով էլ կնկատեք Մարտիրոս Սարյանի նկարներից «ծորացող» լույսը, արեւի ստվերը ու «թափվող» ջերմությունը: Եթե նույնիսկ ապրում եք հայրենիքի սահմաններից դուրս եւ ձեր կարոտակեզ սիրտը տենչում է հայրենիքը, ապա Սարյանի վրձնած կտավները ի զօրու են փոքր ինչ մեղմել կարոտը:

ArmLur.am-ը ներկայացնում է մեծն նկարչի հայտնի մտքերից մի քանիսը:

Կյանքը մի կղզի է: Մարդիկ դուրս են գալիս ծովից, քայլում են այդ կղզիով եւ դարձյալ մտնում ծով: Այդ վաղանցիկ կյանքը հավիտենական է, չքնաղ:

Մարդ ինքը պիտի սովորի, պիտի տեսնի, ճանաչի, սիրի, տեսնի իրեն ու անկեղծ լինի: Իսկ սովորել պետք է բնությունից: Նրանից մեծ ուսուցիչ չկա:

Իր աշխատանքով մարդ պետք է արդարացնի այն շնորհը, որ ստացել է բնությունից:

Արվեստը ժամանակի ու պատմության խրոնիկա չէ եւ ոչ էլ գաղափարների իլյուստրացիա: Այն հոգեկան մի ակտիվություն է, որ հավերժական բնույթ ունի:

Անհնար է սարը տեսնել՝ կանգնելով նրա կողքին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ. ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՊԱՀԱՆՋՈՎ

«Հայկական նախագիծ-ը հայտարարություն է տարածել Ադրբեջանական ԽՍՀ-ում կազմակերպված ջարդերի զոհերի հիշատակի եւ բռնագաղթված հայ բնակչության իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ:

«Ի Հայաստան եւ ի սփյուռս աշխարհի, հայոց օրացույցում փետրվարի 28-ը հիշատակվում է որպես Ադրբեջանական ԽՍՀ-ում կազմակերպված ջարդերի զոհերի հիշատակի եւ բռնագաղթված հայ բնակչության իրավունքների պաշտպանության օր:

Նույնիսկ խորհրդային տարիներին երբեք չմարած ադրբեջանական քաղաքական հայատյացությունը 1988թ.-ից հասավ գագաթնակետին: Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի բնակչության արդար եւ օրինական ցանկությունները որպես ագրեսիայի պատրվակ օգտագործելով՝ Ադրբեջանը պետականորեն իրականացրեց հայ բնակչության ջարդեր եւ բռնագաղթեցում: Սումգայիթի, Բաքվի, Նախիջեւանի ջարդերից զատ՝ Ադրբեջանը բռնագաղթեցրեց իրենց պատմական բնօրրանում՝ Բուն Աղվանքում, Նախիջեւանում, Ուտիք եւ Արցախ աշխարհների Շակաշեն (Գանձակ), Գարդման (Շամխոր), Կողթ (Գետաշենի ենթաշրջան), Մեծ Կվենք եւ Մեծիրանք (Շահումյան եւ Մարտակերտ) գավառներում ապրող հայությանը: Բռնագաղթվածների մի մասն ապաստան գտավ Հայաստանի եւ Արցախի Հանրապետություններում, իսկ մյուս մասն էլ, պետական ոչ պատշաճ հոգածության պատճառով, բռնեց հարկադիր տարագրության ուղին՝ աստիճանաբար հեռանալով հայրենի արմատներից եւ պահանջատիրությունից:

2020-2023 թթ.-երից հետո ադրբեջանական ցեղասպան քաղաքականության զոհերի շարքին ժամանակավորապես ավելացել են Արցախի Հանրապետությունը եւ նրա բնիկ բնակչությունը:

Առերեսվելով իրավիճակի ամբողջ ողբերգականությանը՝ պարտավոր ենք արձանագրել, որ հայությունն իր ազգակազմության արեալում՝ Հայկական լեռնաշխարհում, դեռ երբեք այսքան փոքր տարածք չի զբաղեցրել, որքան 2023 թ.-ից հետո մինչ օրս: Պատմության այս դառը էջերը պետք է սովորեցնեն մեզ, որ թուրք-ադրբեջանական ցեղասպան քաղաքականությունն աշխարհագրական առումով չի սահմանափակվում Հայկական լեռնաշխարհի մի որեւէ առանձին հատվածով, իսկ ժամանակագրական առումով երբեք չի դադարել եւ այժմ էլ շարունակվում է:

Դեպքերի ողբերգականությունը չի կարող արդարացում լինել հուսահատության համար: Իրավիճակի սթափ գնահատումը հուշում է, որ հայոց բռնազավթված հողերի վերազատագրման եւ բնակչության վերադարձի հարցերը կարող են լուծվել բացառապես Հայաստանում ազգային շահերին եւ օրակարգին ծառայող իշխանությունների առկայության պարագայում»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՔՆՆԱԴԱՏԵԼ Է

Իտալիայի հավաքականի նախկին հարձակվող Անտոնիո Կասսանոն քննադատել է Թուրինի «Յուվենտուսի» գլխավոր մարզիչ Տիագո Մոտայի աշխատանքը: «Տիագո Մոտան աղետ է դարձել: Մի քանի ֆուտբոլիստներ իրենց արժեզրկել են: Ես չեմ հասկանում, թե ինչու են նրանք կասկածի տակ դնում Թյուրամին, որը հաճախ չի խաղում, չնայած «Յուվեի» լավագույն խաղացողն է: Նրանք պետք է ամեն ինչ նորից սկսեն այլ մարզչի հետ: Աղետալի արդյունքներ»,-մեջբերում է լրագրող Նիկոլո Սկիրան X սոցիալական ցանցում (նախկին Twitter) Կասանոյի խոսքերը: Հիշեցնենք, որ Տիագո Մոտան «Յուվենտուսի» գլխավոր մարզիչ է դարձել 2024 թվականի ամռանը: Նախկինում մասնագետը գլխավորել է «Բոլոնիան»: 26 տուրից հետո թուրինյան թիմը Ա Սերիայի մրցաշարային աղյուսակի չորրորդ տեղում է՝ 49 միավորով: Թուրինյան թիմը դուրս է մնացել Իտալիայի գավաթի խաղարկությունից քառորդ եզրափակիչ փուլում:

ՄԻԱՎՈՐՆԵՐԻՑ ԿԶՐԿԵ՞Ն

«Բարսելոնայի» նախկին պաշտպան Ժերար Պիկեն առաջարկել է թիմերին միավորներից զրկել, եթե խաղն ավարտվի 0-0 հաշվով: «Չի կարող այնպես լինել, որ գնաս ֆուտբոլային մարզադաշտ, ծախսես 100, 200 կամ 300 եվրո, եւ խաղն ավարտվի 0-0 հաշվով: Ինչ-որ բան պետք է փոխվի: Մի առաջարկ, որը կարելի է դիտարկել, այն է, որ եթե խաղն ավարտվի 0-0 հաշվով, ապա թիմերը միավորներ չեն վաստակում: Այդ դեպքում 70-րդ րոպեից հանդիպումն ավելի բաց կլինի»,- Պիկեի խոսքերն է մեջբերում Marča-ն: Ժերար Պիկեն «Բարսելոնայի» երիտասարդական ակադեմիայի սան է: Նա 2023 թվականին ավարտել է կարիերան:

ԽՈՍԵԼ Է ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ

«Սանթոսի» բրազիլացի հարձակվող Նեյմարը խոսել է իսպանացի մարզիչ Խոսեպ Գվարդիոլայի գլխավորությամբ Մյունխենի «Բավարիա» ձախողված տեղափոխության մասին: «Ես գրեթե տեղափոխվում էի «Բավարիա» Գվարդիոլայի պատճառով: Ես Շվեյցարիայում էի, որտեղ պետք է ստանայի Պուշկաշի մրցանակը: Այնտեղ Գվարդիոլան կապ հաստատեց ինձ հետ. նա ցանկանում էր ինձ հրավիրել այն ակումբ, որը պատրաստվում էր գլխավորել: Պեպը հանեց նոութբուք եւ թուղթ, որպեսզի ցույց տա իր ծրագրերը եւ ասաց, որ կփոխի թիմը, եթե ես մեկ տարվա ընթացքում 60 գոլ չխփեմ:

Նա չցանկացավ ասել, թե որ ակումբում կաշխատի, բայց ես, այնուամենայնիվ, համոզեցի նրան խոստովանել դա՝ խոսքը «Բավարիայի» մասին էր: Ես գիտեմ, որ այնտեղ ցուրտ է, Բարսելոնան կամ Մադրիդը չէ, բայց ես կհոգամ քո մասին, ես քեզ լավագույնը կդարձնեմ: Ես ամեն դեպքում որոշեցի տեղափոխվել «Բարսելոնա», թեեւ դիտարկում էի «Բավարիայի» տարբերակը»,-ասել է Նեյմարը YouTube-ի Podpah ալիքին տված հարցազրույցում:

● *Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը մարտի 14-ին տեղի կունենա «Բանաստեղծության սիմֆոնիա» համերգը: Տոմսերի արժեքը՝5000, 8000, 10000, 12000, 15000, 20.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Հեսաfrfիr է իմանալ, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նույն կե՞rդ է ընդունում Կաթողիկոսին, ինչպես կաթոլիկները՝ Հռոմի Պապին:

Սերինա Մանուկյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ Կաթոլիկները Հռոմի Պապին են ընդունում իբրեւ Եկեղեցու գլուխ, մինչդեռ հայ առաքելականները Հիսուս Քրիստոսին են ընդունում իբրեւ Եկեղեցու գլուխ: Ըստ կանոնագրքի՝ կաթողիկոսը ամբողջ աշխարհի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Առաջնորդական Թեմերի իրավասուն եւ պատասխանատուն է: Սակայն ոչ Պապը, ոչ Կաթողիկոսը անսխալական չեն. միայն Աստված է անսխալական:

Կաթոլիկ Եկեղեցին արտոնում է Պապին ինքնուրույն հավատի հռչակագիր կազմել (վարդապետություն), մինչդեռ Հայ Առաքելական եկեղեցին մյուս Ուղղափառ եկեղեցիների հետ համատեղ է որոշում հավատի հռչակագիրը տիեզերական ժողովներում:

Օրհնությամբ՝Տ. Ղեւոնդ վարդապետ Հովհաննիսյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կաթոլիկ եկեղեցին քարոզում է, որ այն միակ, սրբազան, կաթոլիկ եւ առաքելական ճշմարիտ եկեղեցին է հիմնված Հիսուս Քրիստոս, եւ որ նրա եպիսկոպոսները Քրիստոսի առաքյալների հետեւորդներն են, իսկ Պապը Պետրոս առաքյալի հետեւորդն է, ում առաջնորդությունը հաստատվել է Հիսուսի կողմից:

Կաթոլիկ եկեղեցին հետեւում է եպիսկոպոսական պետական կառուցվածքին, որն առաջնորդվում է եպիսկոպոսների կողմից, ովքեր ստացել են Սուրբ կանոնների խորհրդանիշները եւ կառավարման ֆորմալ արդարադատությունը եկեղեցու ներսում: Կա հոգեւորականության 3 աստիճան? եպիսկոպոսապետություն՝ կազմված եպիսկոպոսներից, ովքեր արդարադատության պատասխանատուն են որոշակի աշխարհագրական տարածքում, որ կոչվում է թեմ, քահանայություն՝ կազմված քահանաներից, ովքեր ձեռնադրվում են եպիսկոպոսների կողմից եւ աշխատում են կրոնական համայնքներում, եւ դիակոնատ կամ սարկավագություն՝ կազմված սարկավագներից, ովքեր օգնում են քահանաներին տարբեր դերերում: Իսկ ամբողջ կաթոլիկ եկեղեցին ղեկավարվում է Հռոմի Պապի կողմից:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ի՞նչ է նշանակում «լողացող» փոխարժեքի քաղաքականություն, ինչո՞ւ է ԿԲ-ն որդեգրել այդ քաղաքականությունը:

Լիլիթ Հունանյան (52 տարեկան, հաշվետար)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ամենամյա հրապարակվող «Արժութային կարգավորումներ եւ արժութային սահմանափակումներ» հաշվետվության մեջ տրված սահմանման՝ «Ազատ լողացող փոխարժեքի քաղաքականությունը նշանակում է, որ փոխարժեքը որոշվում է շուկայում եւ արժութային շուկային ցանկացած պաշտոնական միջամտության նպատակը ավելի շուտ փոխարժեքի փոփոխությունները չափավորելը եւ չափազանց մեծ տատանումները կանխելն է, քան թե դրա մակարդակը սահմանելը»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ օրինակ 2014 թվականի նոյեմբերից ռուսական ռուբլին կիրառում է լողացող փոխարժեք: Նախկինում ռուբլու պաշտոնական փոխարժեքը պահպանվում էր արժութային միջամտության միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Shamshyan.com-ի

Փետրվարի 28-ին պայթյուն է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 17:30-ի սահմաններում Նորագավիթ 1-ին փողոցի 1/6 հասցեի դիմաց կայանված «Mitsubishi» մակնիշի ավտոմեքենայում պայթյուն է տեղի ունեցել, ինչի հետեւանքով վնասվել է հարեւանությամբ կայանված 2 «BMW X5» մակնիշի ավտոմեքենա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	-15 -20 -4 -7
	Կոտայքի լեռներ	-15 -19 -5 -7
	Կոտայքի նախալեռներ	-6 -10 -1 -3
	Գեղարքունիք	-16 -20 -6 -8
	Լոռի	-10 -15 -3 +1
	Տավուշ	-5 -8 -2 +2
	Արագածոտնի լեռներ	-16 -20 -6 -10
	Արագածոտնի նախալեռներ	-6 -9 0 -3

	Արարատ	-4 -7 0 +2
	Արմավիր	-6 -9 0 +3
	Վայոց ձորի լեռներ	-15 -20 -6 -9
	Վայոց ձորի նախալեռներ	-6 -11 0 -3
	Սյունիքի հովիտներ	-5 -9 0 -4
	Սյունիքի նախալեռներ	-12 -17 -2 -5
	ԼՂՀ	-11 -15 -2 -4
	Երեւան	-5 -9 -4 -4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.2.2025**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*